



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

92

ՀԻՇԱՏԱԿԱՐԱԿՏՈՐ

1911

Էքզ. Բ

Պր. 20, 22

ԿՐԻ, ԻԲ

Կ. Պուլիս

*[Faint handwritten notes and a small sketch in the top right corner.]*

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ~~

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ~~

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ~~

*[Faint handwritten notes, possibly a signature or date.]*

*[Faint handwritten signature or text.]*

9147.9257Գ

Գ-36

ՉԺԼ Կոմիտե

Հայրենիք

2 11 12

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն



ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՁԵՌԱԳՐԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՆ. ԵՒՆ.

## 1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԻՅՈՎ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Կ Ա Չ Մ Ե Ց  
Վ. Գ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ԱՁԱՏ ՄԱՏԵՆԱՇՄԱՐ ԹԻՒ 20

- 104. Անտոն Եսայի Փառա Թրեկլը (Շար.) 1 Պատկեր
- 105. Գրիգոր Ջիլիկիհեան 2 »
- 106. Գեորգ Ապուլլոս 5 »
- 107. Եղիա Տեոսեան 5 »



ՌԱՅԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ  
(Բանաւ Բարիպս)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ  
Պ Ր Ա Կ Ի Ք. ) 22

1911

Լ. ՊՈԼԻՒՍ

ՏՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
Պատր Ալի Սեփերճիկի փողոց թիւ 27

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
Վ. ԵՆ Պ. ՋԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ  
Կ. ՊՈԼԻՍ



«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ» կը հրատարակուի պրակ սա պրակ ամիսը անգամ մը, ամբողջութիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ՝ 4 հատորի մէջ ամիսօրուած և պիտի պարունակէ երևելի ազգայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուածները, կաթողիկոսներու և պատրիարքներու կենդանիները և այլն:

Կը շարունակուի Բ. Գ. Գ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 դրուչի:

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց քով ունեցած սօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք անոյժար իրենց կը վերադարձնենք դարձեալ:

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ 108 դրչ. ամէն տեղի համար, իւրաքանչիւր հատորի համար 30 դրուչ:

Բաժանորդներու անունները կը հրատարակինք հետզհետէ:

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարուայ սկիզբները և բաժանորդները պիտի ստանան իրր նուէր զեղարուեստական շքեղ կողքեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստուելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ Տպագրութեան 400 ամեայ Յորելեանին:

Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի գնահատէ այս գործը որ բազմաժառ եղած է և որուն համար սարիներով տքնած և տառապած ենք:

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 դրուչի Պոլիս Չարդարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Ալեքսանդրիա Յ. Ղալիկեանի և Գաֆիէ Սուրէն Չաքմաքճեանի քով:

Մէկ պրակի գինը 2 դրուչ. գաւառներու համար 100 փառա  
Իմեկ Չարդարեան Գրատուն, Պոլիս, Չախնազնիլար, 24 — 26:  
Կը ծախուի ամեն տեղ:

### Մ Ե Ր Վ Ճ Ա Ր Ո Ղ Բ Ա Ք Ա Ն Ո Ր Դ Ն Ե Ր Ը

				Դրչ.
105.	Միջրան Խան Գալփաեան	Ալեքսանդրիա	4 հատոր	7692
106.	Բրոֆ. Գալպեան	»	4»	108
107.	Արմենակ Գարրիէլեան	»	Բ. »	30
108.	Մկրտիչ Նորիկեան	»	4 »	108
109.	Յ. Փափազեան	»	Բ. »	30
110.	Արմաւիր Մուրադեան	»	Ա. »	30
111.	Տիկին Բարթող փաշա	»	4 »	108
112.	Յովհաննէս Աղամբաեան	Գանձիրէ	4 »	108
113.	Ժ. Սիմոն	»	4 »	108
				8430

17198

ընտանիքը, որոնք Կեսարիա գրկուեցան 1827  
Հոկտ. Յին և եռամեայ աքսորէ վերջ 1830  
Յունվ. 6ին ներման արժանանալով վերադար-  
ձան:

Վերսաին Պոլիս հաստատուելով Անտոն  
վերսկաւ յառաջանալ ու ուսանիլ չնորհիւ իր  
հմուտ ուսուցիչներուն՝ Թուրքերէն, Ֆրանսե-  
րէն, Յունարէն, Իտալերէն, րնական և պատ-  
մական գիտութիւններ ևւն:

Իր հօր մահէն վերջ Անտոն չուզեց շարու-  
նակել սեզանաւորութիւնը և 1847ին մտաւ  
ղիւստանադիտական ասպարէզը՝ իրր Բարիզի  
Օսմ. դեպանասան քարաուղար-թարգման  
և 2 1/2 տարուան պաշտօնավարութեամբ արժա-  
նացաւ Բարիզի դեսպանին, Սիւլէյման փաշայի  
համակրութեան:

1850ին Անտոն էֆ. Թընկըր Պոլիս գալով  
կ'անուանուի Բ. Դրան թարգմանութեան գի-  
ւանին կցորդ. նոյն տարին կ'ամուսնանայ Օր.  
Ֆաննի Կլափաննիի հետ:

1852ին կ'ընկերանայ Մօլաուլաքիա գաջող  
Սիւլէյման փաշայի սրուն ծանօթացած էր Բա-  
րիզի մէջ: Վերադարձին կը զրկուի Արչիպեղա-  
գոս իրր քարաուղար Մուսա Սաֆէթ փաշայի:  
Իր սոյն պաշտօնին աւթիւլ ցոյց աուած գոր-  
ծունէութեան պատճառաւ կ'արժանանայ իֆ-  
թիխարի չքանչանին:

1856ին, նրչիպեղագոսէ վերադառնալով  
կ'անուանուի ծովային նախարարութեան առև-  
տրական շոգենաւներու սնօրէն և իր ձեռ-  
ներէց ոգիովը կարող կ'ըլլայ վարչութիւնը  
կանոնաւորելու: Չորս տարի այդ պաշտօնը  
վարելէ յետոյ 1860ին կ'անուանուի Պր-  
տերաղմական նախարարութեան օտար լեզուաց  
ղիւստին տեսուչ:

1868ին Կայսեր անձնական նախարարութեան  
չոգենաւներուն ընդհ. սնօրէն կ'ըլլայ:

1872ին կը կոչուի Օսմ. թղթատարական  
վարչութեան ընդհ. սնօրէնի պաշտօնին և  
տարի մը վերջ 1873ին կ'անուանուի Պետա-  
կան խորհրդոյ անդամ և կ'ստանայ երկրորդ  
կարգի Մէճիսիյէ պատուանշան:

Այդ միջոցին իր տիկնոջ հետ ուղեւորու-  
թիւն մը կը կատարէ դէպի Եւրոպայի գլխաւոր  
քաղաքները և մօտէն կ'ուսումնասիրէ Եւրո-  
պական տէրութեանց թղթատարական և առև-  
տրական յառաջընթացութիւնները:

1876ին իր գործունէութեան գագաթնա-  
կէտին կը հասնի երբ վերսաին կ'անուանուի թղթ-  
թատարական և հեռագրական վարչութեան Ընդ.  
սնօրէն՝ փաշայութեան աստիճանը ստանալով:

Եավէր փաշա կը լրացնէ իրմէ առաջ նոյն  
պաշտօնին կոչուած Հայու մը Աղաթօն Գրիգոր  
էֆ. իրրած բարեկարգութիւնները թղթատարա-  
կան և հեռագրական վարչութեան մէջ: Կը հրատա-  
րակէ 1877ի դրոշմաթուղթերը որոնք եւրոպա-  
կան ձեւ ու զեղեցկութիւն ունէին, կը կանո-  
նաւորէ ամէն բան. ընդհանուր կանոնադրին մէջ  
չատ մը փոփոխութիւններ կը մտցունէ և այդ-  
պէսով կը յաջողի անկարող պաշտօնեաները  
ճամբելով կարողներ անոնց տեղ պաշտօնի կո-  
չելու: Վերջապէս իր օրով վարչութիւնը գրե-  
թէ կը վերակազմուի:

1881ին կ'անուանուի վերահետուչ անուղ-  
ղակի տար սուրքերուն որոնք կը ստանային  
կորդ մը դրամաաւելներ որոնցմէ պետութիւնը  
փոխառութիւն կ'ըրած էր: Այս վարչութիւնը  
1884ին կը վերածուի Հօնր. պարտուց վար-  
չութեան: Եավէր փաշա ընդհ. քննիչ կ'ըլլայ  
նաեւ նոյն վարչութեան և այս ամթիւ կը ստա-  
նայ առաջին մէճիսիյէ պատուանշան: Այս վերջին  
պաշտօնը կը վարէ երկարատեւ տարիներ, գրեթէ  
մինչև իր մահը: Իր սոյն երկարատեւ պաշ-  
տօնավարութեանց միջոցին ստացած է նաեւ օ-  
տար տէրութիւններէ պատուանշաններ, ֆռան-  
սական պատուց լէզէտի խաչը, խաղաղական  
թագի և աւստրիական կայսերական պատուա-  
նշանները և Պիոս Թ. պապէն Ս. Գրիգորի  
աստիճանը:

Եավէր Թընկըր փաշա հակառակ իր ամբողջ  
կեանքը նուիրած ըլլալուն պետական գործու-  
նէութեան, ունեցած է նաեւ աւելի կամ'նուազ  
ազգային գործունէութիւն: Իր եզրօր, Յով-  
հաննէս Թընկըր էֆ. ի հետ իրր հակահասուենան  
պայքարած է և կառուցած է 1870ին Թէրա-  
պիայի Հայ-Հռոմէականաց եկեղեցին՝ յատկացը-  
նելով նաեւ հարկ եղած եկամուսնիները:

Մեռած է 1908 Մարտ 18ին և ամփոփուած  
Թէրապիայի եկեղեցւոյն շրջափակին մէջ:

Աղբիւրներ. — Son Excellence Yaver pacha  
Tinghir par Al. P. Sioumian 1902 venise. —  
1908ի թերթեր:

2705

Յիշատակարան



(602-73)

111-1649 ախ

Ա. 2

# Գ Է Ո Ր Գ Ա Պ Տ ՈՒ Լ Լ Ա Ն

Ապտուլլան գերդաստանին սկիզբն է Կեսա-  
րիա՝ և նախահայրն է Ալիքսան Կեսարացի որ  
1610ին Պոլիս եկած է և Սամաթիա թաղը բը-  
նակած է, իրմէ սերած են Ապտուլլանեան և  
Հիւրմիւլզ ընտանիքները :

Ապտուլլան գերդաստանին կը հանդիպինք  
նաեւ Վենետիկի մէջ որոնք սակայն այժմ գո-  
ւովիւն չունին :



258.— ԱՐՐԱՀԱՍՄ ԱՊՏՈՒԼԼԱՆ

Արրահամ Ապտուլլան ծնած է Պոլսոյ մէջ  
1792ին : Պատանի հասակին մէջ Գաղէզի քով  
մտած և Պէզճեան ամիրայի հետ արհեստակից  
ըլլալով անոր բարեկամն էր ի վերջոյ մետաքսի  
գործերով զբաղեցաւ և մեռաւ 1874ին : Հինգ  
մանչ զաւակներ ունեցած է որոնց երեքը Վիչէն  
Յովսէփ և Գէորգ զբաղած են զեղարուես-  
տով :

Վիչէն Ապտուլլան առաջին կարգի մինեա-  
թիւրիսթ էր և գնահատուած բարձր շրջա-  
նակներէ՝ իր հիանալի նկարներովը որոնք կը  
պատրաստէր փղոսկրի վրայ :

Վիլիամ Մէճիտ և Սուլթան Ադիգ եր-  
ջանիք իշատակ կայսրերու և քանի մը երեւելի  
փաշանք ու նկարները շինած է հիանալի կա-  
տարելու թեամբ և իրեն այս աստիճան զեղար-  
ուեստի ընդունակութիւնը պատճառ եղած է  
որ 1853 թուականին՝ երեք եղբայրները լու-  
սանկարչաաւան մը բանան Բերայի մէջ :

Գէորգ Ապտուլլան ծնած է 1839ին Օրթա-  
գիւղի մէջ : Իր նախնական կրթութիւնը ստա-  
ցած է տեղւոյն Լուսաւորչեան վարժարանին  
մէջ ուր կը դասախօսէր այդ միջոցին համբա-  
ւանոր բանաստեղծն Մկրտիչ Պէչիկթաշեան զեռ  
նոր դարձած Բատուայի Մուրաթեան վարժա-  
րանէն :

1852ին Գէորգ Վենետիկ կ'երթայ ուսումը  
չարունակելու և իրեն դասակից կ'ունենայ  
Աճէմեան Մկրտիչ և Թովմաս Թէրզեան իսկ իրր  
ուսուցիչ Հ. Ղեւոնդ Ալիշան :

Վեց տարուան դասընթացքով մը կը լրացունէ  
Գէորգ զպրոցական շրջանը ընկերներուն մէջ  
միշտ առաջինն հանդիսանալով :

Շնորհիւ իր ստացած գուտ ազգային դաս-  
տիարակութեան և Հ. Ալիշանի իրեն ներշնչ-  
չած հայրենասիրութեան Գէորգ Ապտուլլան՝  
որչափ զեղարուեստի մարդ, նոյնչափ ալ ազգ-  
մեծ անհատ մը եղած է և պարձանք Հայու-  
թեան :

Երբ Արեւելեան պատերազմը ծագեցաւ  
(1854 Նրիմի պատերազմը) Վիչէն Ապտուլլան  
Բապախ անուն Գերմանացիի մը քով մտած էր,  
որ այդ ժամանակ Մոլթ.քէ գորավարին հետ միա-  
սին Պոլիս եկած էր և որ յետոյ զբաղեցաւ Տա-  
կէրէօթիլը կոչուած արուեստով, այն ժամա-  
նակուան լուսանկարի արուեստը Տակէրէօթիլըն  
էր որ արժաթաղօծ թիթեղի վրայ պատկեր հա-  
նել էր : Բապախ իր քիմիագէտ մեծ հոշակ հա-  
նեց այս արուեստին մէջ որ բուն լուսանկար-  
չութեան սկզբնաւորութիւնն էր :

Բապախ երբ քաջուցեցաւ արուեստէն 1858  
թուականին և Գէորգ Ապտուլլան վերադար-  
ձաւ Վենետիկէն, երեք եղբայրներ ահա այն  
ատեն միանալով հաստատեցին լուսանկարչա-

տունն Բերա ճիշտ հոն ուր Բապախ կ'աշխա-  
տէր և սկսան բուն լուսանկարչութեան : Նախ-  
կին սիսթէմը թիթեղի վրայ էր իսկ բուն ֆոթո-  
կրաֆին նախ ապակիի յետոյ թղթի վրայ փո-  
խադրութիւնն էր : Երեք եղբայրները ոգի ի  
բուն աշխատեցան այս արուեստին կատարե-  
լագործութեան, որ այն ժամանակ դեռ խան-  
ձարուքի մէջ փոքր մանուկ մըն էր, ամէն

կը հրաւիրէ գիրենք Լոնտոն, խոստանալով չը  
զրկել գիրենք իրեն բարոյական աջակցութիւնէն  
եթէ Լոնտոնի մէջ տուն մը բանան, և քանի  
մը անգամ ալ կը կրկնէ իր խոստումը սակայն  
դժբախտաբար կարգ մը պատճառներով Ապ-  
տուլլան եղբայրները չեն ընդունիր եղած ա-  
ռաջարկը, որ իրենց համար համաշխարհային  
փառք մը բերելու առիթ մը պիտի ըլլար :



259.— ԳԷՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՆ

գծուարութեանց դիմադրելով, ջանք, զոհո-  
ղութիւն և դրամ չննայեցին և այդպէսով նոյն  
արուեստը շատ յառաջացուցին Արեւելքի մէջ,  
հասաւ ժամանակ մը երբ Պոլիս այցելող զբոսա-  
չըջիկներ և այցելուներ անհրաժեշտ պէտք մը  
կը զգային իրենց նկարը պատրաստել տալու  
Ապտուլլաններուն, անոնց յաջողութեան համար  
անկեղծ շնորհաւորութիւններ ուղղելով :

Կալէսի իշխանը՝ ապա Էտուարտ թագա-  
ւոր, 1868ին երբ Պոլիս կուգայ կը նկարուի  
Ապտուլլաններէն և այնչափ գոհ կը մնայ որ,

Օսմանեան կայսրերու լուսանկարիչը ըլլալով  
լուսանկարած են շատ մը թագաւորներ, իշ-  
խաններ ու պիւստաղէաներ, ստացած են 8  
չքանչան 3 միտայլ որոնք զանազան առիթնե-  
րով ընծայուած են իրենց ձեռակերտներուն  
յաջողութեան իրր վարձատրութիւն :

Նոյն ժամանակներու guide des voyageurs  
գրքին մէջ մասնաւորաբար գրուած է թէ «ա-  
մէն ոք որ Պոլիս կը ճամբորդէ, անհրաժեշտ  
պէտք է որ այցելէ Վասիար, Այա-Սօֆիա և այլ



Անգամ մը Ներսէս Պատրիարք ժողովի մը մէջ Քէորդ Ապտուլլահի ներկայութեան կ'ըսէ թէ «եթէ 50 հաա Ապտուլլահ ունենայի կրնայի Ազգիս ցաւերը մեղմացնել և բռնապետութեան ձեռքէն ազատել» և կըր Քէորդ համեստօրար կը մերժէ, Ներսէս Պատրիարք կ'ըսէ — ուրեմն 100ի կը բարձրացնեմ այս թիւը, որ դժբաղդաբար չպիտի կարենամ գանել երբէք:

Թուրքո-Ռուս վերջին պատերազմը նոր վերջացած՝ Սան Սթէֆանո կը գտնուէին տակաւին Ռուս Զորավարները, և հաշտութեան գաշնագիրը հազիւ կնքուած էր երբ Քէորդ Ապտուլլահ կանչուեցաւ լուսանկարելու համար զանոնք. բայց Ապտուլլահ խելքը միտքը իր տառապած ազգին նուիրած՝ grand duc Nicolasի կ'ազդերսէ լալազին Ենայտրի տան մէջ հոն ուր ստորագրուած էր Սան-Սթէֆանոի դաշ-

նագիրը և գրուած Հայոց վերաբերեալ 16րդ յօդուածը որ յետոյ վերածուեցաւ Պէրլինի 61րդ յօդուածին: — Վսեմապատիւ Տէր, մի մոռնաք տարաբաղդ Հայերս և ազատեցէք մեզ հարստահարութիւններէ և կեղեքումներէ:

Որու ի պատասխան Իկնատիէֆ Ռուսիոյ զեապտնը կ'ըսէ հետեւեալ նշանաւոր խօսքը:

— Faites-moi la photographie de la salle où l'Armenie a été constituée.

(Լուսանկարեցէք այն սրահը ուր Հայաստանը կազմուեցաւ:)

Դառն հեզնութիւն մը չէի՞ն այս բառերը, որոնք դժբաղդ Հայուն արիւնի ու տառապանքի նորանոր ճամբաներ բային որոնք տեւեցին 30 երկար տարիներ և միայն շնորհիւ Օսմանեան Սահմանադրութեան մեղմացան:



## ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Գրիգոր Չիլինկիրեան ծնած է Իզմիրի մէջ 1839ին: Զաւակն էր պարկեշտ դարբին արհեստաւորի մը Եւզոկիացի հաճի Յովակիմին:

Գրիգոր նախ կը յաճախէ տեղւոյն Մետրոպոլիտան վարժարանը սակայն հազիւ թէ մի քիչ հմտացած հայերէնի և տաճկերէնի կիսաւարտ կը թողու վարժարանը ստիպմամբ իր ծնողքին:

Այս միջոցին ժամոցոյցի վաճառական Յով. աղա Սիմոնեան մտերմը ըլլալով Ազգ. վարժարանին տեսուչ Անդրէաս Փափազեանի, կը խնդրէ անկէ իրը գրադիր բանիլուսն և գործունեայ պատանի մը: Այս կերպով հազիւ 13

—14 տարու Գրիգոր Չիլինկիրեան իրը պաշտօնեայ կը մտնէ Սիմոնեանի վաճառատունը:

Այս պարագային է որ ի յայտ կուգայ Չիլինկիրեան իրը ինքնաշխատութեան դիւցազն մը: Մէկ կողմէ կատարելով իր պաշտօնը միւս կողմէ յառաջ կը սանի իր մտաւոր կրթութիւնը և վարժարանին մէջ կիսկաաար թողած ուսումները ինքն իրեն ոչ միայն կը կատարելագործէ, այլ և յունարէն, իտալերէն և ֆրանսերէն լեզուներն ալ կարող կ'ըլլայ սովորելու իր մտաւոր բացասիկ յիշողութեամբը և կարողութեամբը: Իր այս պաշտօնին մէջ կը մնայ մինչև 1860 թուականը 7 տարւոյ չափ: Երբ



263.— ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

խաւարեալներու ու լուսաւորեալներու պայքարը արձագանգ կը գտնէ նաեւ Իզմիրի մէջ, Չիլինկիրեանի և իր համախոհ մէկ քանի երիտասարդներու նոր գաղափարները հաճոյ չեն թուիր իր թաքրօսին որով Չիլինկիրեան կրատիպուի հրաժարիլ անկաշկանդ կերպով մղելու համար գաղափարի պայքարը:

Չիլինկիրեան իր երիտասարդ համախոհներուն դրդուածով թարգմանութեան գրասենեակ մը կը բանայ և որովհետեւ սակէ 50 տարի առաջ ինչպէս ամէն տեղի նոյնպէս և Իզմիրի մէջ հազուադիւս էին բազմամուտ անձնաւու-

րութիւններ, Չիլինկիրեանի ձեռնարկը յաջողութեան շաւղին մէջ կը մտնայ, մանաւանդ որ Եւրոպացի վաճառականներ իմանալով թուրքերէն և ֆրանսերէն փոխադարձ թարգմանութեան համար հայթայթուած այդ դիւրութիւնը, արժանաւորապէս կը վարձատրէին զինքը:

Չիլինկիրեան իր ամէնէն վառվառն տարիքին մէջ՝ տարածելու համար իր գաղափարները և պայքարելու համար խաւարեալ գաղափարներու և նորահաստատ ազգ. սահմանադրութեան հակառակորդներուն դէմ, ուղեց աւելի լուրջ ձեռնարկներ ընել՝ թելադրուած իր համախոհ-

ներէն , Գալուստ կոստանդէն , Մ . Մամուր-եանէն ևն . և զործակցութեամբ Արմենակ Հայկուսիի 1861 յուլիս 1ին սկսաւ հրատարակել Ծաղիկ տանօրեայ (տես թիւ 264) հանդէսը աշխատակցութեամբ իր գաղափարակիցներուն :

Անուարիկ մնացորդ մասը Ծաղիկի Ա . թիւին առաջնորդող յօդուածին որուն առաջին մասը կը տեսնուի մեր 264րդ պատկերով և որով գաղափար մը կ'ունենանք Չիլինկիրեանի ոճին ու գաղափարներուն վրայ :

«Լրագիր մը կատարեալ իրաւունք ունէր , երբ ասկէ քանի մը տարի առաջ Հայերուս վրայ գրելու ատեն ըսաւ «Հայերուն լուսաւորութիւնը իրենց չափիկին և մարմինին մէջտեղն է :» Կը յուսանք որ այս ծանր այլ ճշմարտ խօսքը այլ չպիտի ըսուի մեզի համար , և ահա այս յոյսով քաջալերուելով և վստահելով յարգոյ ազգասիրաց պաշտպանութեանը վրայ , այսօր կը համարձակինք փոքր հրատարակումի մը ձեռք զարնել՝ մեր այս դուզնաքեայ ձեռնարկութեան շարժառիթ ունենալով ոչ թէ անձնական չանու փափաք մը կամ համբաւատենչութեան զգայնութիւն մը , այլ մեր սիրելի ազգին եթէ կարելի է , դոյզն ինչ ծառայութիւն ընելու անչանախնդիր դիտաւորութիւնը : Գիտենք որ մեր միտքը տկար է , այլ ազգին յառաջըլմուծեան օժանդակելու համար ունեցած և ուսանելիս անգուսպ . պարտաւորութիւն մ'է այս . արդարեւ վնաս պարտաւորութիւն . որովհետեւ եթէ մարդս օրէ օր պէտք է յառաջանայ ու կատարելագործուի այն բնական կանոններով , որոնցմով ամէն էակներ յառաջելու վրայ են , եթէ կ'ըսեմ իր պարագն է ոչ միայն իր , այլ նաեւ իր նմաններուն կատարելագործութեանը ու բարոյական շինութեանը աշխատիլ ու բոլոր իր գորութիւններովը իր նպատակին հասնելու ջանակ , յայտնի է թէ ամէն մէկ անհատ ընկերութեան մէջ կատարելու պարտաւորութիւններ ունի :

Հանդէսիս նկարագրին է Ազգային , Իմաստասիրական , Բանաստեղծական և Բանադատական . խմբագրութեան առաջին պարտաւորութիւնը պիտի լլայ կրօնական ինքիքներու չխառնուել , որ և իցէ կուսակցութեան դրօշին ներքեւ չմտնել , և խոնհունութեամբ ճշմարտութիւնը բնի առանց զրգուծեան տեղի տալու , ձեռքէն եկածը ընել որ չթառամի իր Ծաղիկը ու փոխանակ վատ կիրքերու գործի ընելու գոյն , իրեն նպատակ ունենայ մի միայն

ազգին օգուտը : Ֆրանսայի մէջ հայրենասիրաց դրօշակին վրայ գրուած է (après Dieu la patrie) : Հայերը եւս կը պարտաւորին այսուհետեւ առանց կրօնքի խտրութիւն ընելու , եղբայրութեան ու միաբանութեան կապերով միանալ ու հաստատ որոշուելով զինուորիլ ազգասիրութեան այն դրօշակին տակ , որուն վրայ պէտք է գրուի «Աստուծանէ ետք ազգութիւն» :

Գ . Չ .

Այս կերպով չորս տարուան յաջող շրջան մը կը բոլորէ Ծաղիկի հրատարակութիւնը երբ 1865 Մարտ 1ի 107րդ թիւին մէջ լոյս կը տեսնայ Գր . Չիլինկիրեանէն հեղինակուած և ծածկանունէ մը ստորագրուած Ժեօն Ժակնետո պարսահանդեպ վերնագրով յօդուածն ինչ որ Իզմիրի Հայ հասարակութեան մէջ գրեթէ ընդհանուր խօսակցութեան նիւթ և առններու ու վաճառատանց մէջ ըստ մեծի մասին համակիր և սակաւ ինչ հակակիր զգացումներու արտայայտութեան սուրիթ մը կ'ըլլայ : — Հակակրութեան թեթեւ հոսանք մը արտադրող պատճառն էր պարսահանդէսը սարքող քանի մը երիտասարդաց անձնասիրութեան վերաբոլիլ :

Յօդուածին հրատարակութենէն շարժ մը ետք զեռ շարունակող վիճարանութեան մ'առթիւ Անդլոյն հիւպատոսարանի թարգման Մ . Սոււմարեան , որ Գր . Չիլինկիրեանի բարեկամն և ազատամիտ ու լեզուազէտ երիտասարդ մըն էր Ս . Ա . ՛ր կ'ապոսկէ երբ սա , որ խաւարեացակետ կուսակցութեան պիտերէն մին էր , կը յանդգնի սնոր անուանի հօրը քիչասակին դէմ անարգանք մ'ընելու :

Այն ատեն ազատկանսը ջոջն ու իր համամիտները չկրնալով վրէժ լուծել Մ . Սոււմարեանէն , դատ կը բանան Ծաղիկի խմբագրին դէմ՝ իրենց առաջնորդ ունենալով Գր . Ապրօ անուն անձ մը որ Իզմիրի այն ժամանակի կուսակալ միականի Բէչիտ Բաշային արարածներէն մին էր : — Գր . Չիլինկիրեան մերժելով ծաղիկի մէջ հրատարակել ամենաթեթեւ յետակոչում մը , զոր դատախազները կը խնդրէին իրմէ՝ կը հաւանի դատուելու և 28 օր բանտարկուելու կը դատապարտուի այն ժամանակի Օսմանեան արդարութեան քմահաճութեան համեմատ : Այն ատեն Լուսաւորեալ ըսուած կուսակցութեան գրեթէ բոլոր պարագլուխները և երիւսասարդները գուճգ ի գուճգ կը դիմեն դէպ այն սենեակը որ իր բանտ յատկացուած էր Գր . Չիլին-

կիրեանին և իրենց համակրութիւնը կը յայտնեն : Անոնց կը յաջորդեն խաւարեալներէ ու մանք , որք կ'առաջարկէին իսկոյն զինքը բանտէն արձակել առ . որոնց կը պատասխանէ Չիլինկիրեան թէ կամ 28 օր բանտ պիտի մնայ և կամ օտարի մը պաշտպանութեամբ միայն պիտի ազատի :

կութիւնը կը փոխադրէ Պոլիս ուր լոյս կը տեսնէ 1865 ապրիլ 1ի թիւը որուն մէջ կը գրէ թէ «մեր թերթին հրատարակումը անկարելի էր որ Իզմիրի մէջ շարունակուէր՝ վեցերորդ անգամ հակաակորդաց քսութեան գոհուելէ ետք : Այսպէս Ծաղիկ երկամեայ շրջան մը եւս կը բոլորէ Պոլսոյ մէջ հրատարակուելու»

### Ծ Ա Ղ Ի Կ Հ Ա Ն Դ Ի Ս Տ Ն Ո Ր Ե Ա Յ

ԱՆՍԻ ԱՆՆԵՐԸ		1861	ԹԻՒ ԿՈՒԼԵՍԻ
Հարստարան տէն անոյ 1 թ . 10 թ	Հարստարան տէն անոյ 1 թ . 10 թ	Գրքերու կարգը	Գրքերու կարգը
Սարգսիսեան տէն 1 թ . 10 թ	Սարգսիսեան տէն 1 թ . 10 թ	Գրքերու կարգը	Գրքերու կարգը

Այնքան մէջ գրեական սիրոյ աճին . և որէ որ աչքին մէջ յայտնուիլ սկսեցաւ մեր պարսահանգեան հարեանքի անորոշութիւնը . և Սոււմարեան մը արձագանք եղաւ կրօնք . Սոււմարեան հիմն կուգի Վազրիս յառաջակցութեան շարժումը : Սոււմարեան մը արձագանք եղաւ կրօնք . Սոււմարեան հիմն կուգի Վազրիս յառաջակցութեան շարժումը : Սոււմարեան մը արձագանք եղաւ կրօնք . Սոււմարեան հիմն կուգի Վազրիս յառաջակցութեան շարժումը : Սոււմարեան մը արձագանք եղաւ կրօնք . Սոււմարեան հիմն կուգի Վազրիս յառաջակցութեան շարժումը :

#### 264.— ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ ԵՒ ԱԳՐԻՍԻ ԱՅԻԻԸ

Իրօք Իզմիրի Էմբարսիալ լրագրին խմբագրացեա Պ . Ն . Էսուար երբ կը լսէ Գր . Չիլինկիրեանի բանտարկուելը , իսկոյն կը դիմէ Բէչիտ փաշային և բողոքելով իր մէկ պաշտօնակցին անիրաւ բանտարկութեան դէմ , իսկոյն կը ստանայ բանտէն արձակուելու հրամանք : Այս կերպով Չիլինկիրեան 28 օրուան տեղ միայն 24 ժամ կը մնայ բանտին մէջ :

Իրօք 12 անօրինութեամբ Մ . Մամուրեանի և աշխատակցութեամբ Չիլինկիրեանի որ Պերճ կեղծանունով կը գրէր : Ծաղիկ իր անհետացումէն առաջ վերջին անգամ մը եւս կը փոխադրուի Իզմիր 134րդ թիւով բայց հազիւ 7—8 ամսուան կարճ կեանք մը կ'ունենայ և 1867 նոյ . 1ի 146րդ թիւով Չիլինկիրեան կը հրատարակէ ծաղիկի դատարանական վերնագրով յօդուածը որուն մէջ կը գրէ թէ «օրագիր մը մեր մէջ երկու կերպով կրնայ



ապրիլ, անցեալին ծառայելով, ապագային ծառայելով: ՀԱՅԸ ԴՊՐՈՑ, ԼՐԱԳԻՐ, ԳԻՐԻ ԵՒ ԹԱՆԳԱՐԱՆ Կ'ԸՍԷ Կ'ԵՐԹԱՅ, ԱՅԼ ՈՉ ՎԱՐԺԱՊԵՏԸ Կ'Ը ՊԱՇՏՊԱՆԷ ԵՒ ՈՉ ՄԱՍՈՒԼԸ:» Պարտութիւն մը որ հայկական առած կրնաք համարել այսօր անտարակոյս կերպով:

Ծաղիկի դադրելովը կը վերջանայ Չիլինկիրեանի հրապարակազրական կեանքը միայն: Անկէ վերջ կը սկսի իրեն արձեռա ընտրած թարգմանչութիւնը որ ի սպաս Հայ ազգին կը գնէ ու անով ալ օգտակար կը հանդիսանայ Հայ գրականութեան՝ Եւրոպական շարք մը վէպեր թարգմանելով:

1860ին հրատարակած էր ձեռնառութեամբ Յովն. Սիմօնեանի, Շախտարեանի մէկ գործը հայաստա սանկերէն թարգմանութեամբ «Սոն ազընտէրածին սէրկիւզէշի օլան վուզուսթ»:

1867ին կը թարգմանէ Լամարթինի Ռաֆայէլ:

Սակայն ինչ որ մեզ հայերս իրաւամբ հրատարակելու էինք այն ալ վիքթոր Հիւկոյի թըռուառներուն թարգմանութիւնն է որուն կը ձեռնարկէ 1868ին՝ ֆրանսերէն առաջին ազգաբնութիւնէն 6 տարի միայն վերջ, պարագայ մը որով Հայ լեզուին կ'ընծայուի ճիշդ կամ ճիշդ կարգ լեզուներ աշխարհի լեզուներու թարգմանուած այդ գործին շարքին մէջ: Սոյն թարգմանութիւնը 1885ին երկրորդ և 1909ին երրորդ ապրարութեամբ ի լոյս կ'ընծայուի:

Բայի վերջիչեալներէն թարգմանած է նաև հեռուեալները որոնք Իզմիր սպուած են Տէաէեան սպարանին մէջ:

Էօթէն Մարիչը Սիւի չորս հատոր 1870ին:

Օրիորդ Լաֆեթիսի հեղինակ Ժ. Սան մէկ հատոր 1871ին:

Մանօն Լեաֆօ հեղինակ Ապպէ Բրէվօ մէկ հատոր 1872ին:

Դարուս մեկ զաւկին խոստովանակը հեղինակ Ալֆրէտ ար Միւսսէ երկու հատոր 1873ին:

Պարօն զը Դաւօն հեղինակ Օգդավ Ֆէօյէ երկու հատոր 1876ին:

Մարիօն զը Լորմի խոստովանակը հեղինակ Էօթէն ար Միւրգուր Ֆինգ հատոր 1878ին:

Իբր հեղինակութիւն գրած է ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս անուն գիրքը 1883ին որով իր Պոլիս այցելութեան առիթով կրած ապաւորութիւնները նամակներու ձեւին ասկ կը հազորդէ իր բարեկամին Մ. Մամուրեանի մատնանիչ ընելով այն խորունկ վէրքերը որոնք գոյութիւն ունէին այն ատեն Պոլսահայ բարքերուն մէջ:

Չիլինկիրեան ունեցած է նաև Ազգային, վարչական և կրթական գործերու մէջ մասնակցութիւններ: Այսպէս Իզմիրի գաւառական ժողովի անդամ եղած է, նոյնպէս տեղւոյն Ուսումն. Խորհրդին ալ անդամակցած է և նոյն իսկ միջոց մը սանկերէն լեզուն դաստիարակ է Մեարպեան վարժարանին մէջ անձուիրար:

Ընկճուած և ազգին նուիրած իր գործունէութիւնէն յուսախաբ եղած ի վերջոյ կը զիմէ դարձեալ իր սեփական ուժին, ինքնաշխատութեան, ու 1876ի միջոցներուն կը յաջողի փաստօրանութեան վկայական ստանալ, ասպարէզ մը որ իրեն կ'ապահովէ նիւթականը, որով կարող կ'ըլլայ ալ այնուհետև առանց սեւէ ակնկալութեան իր աւելորդ ժամերն յատկացնել Հայ գրականութեան:

Աղբիւրներ. — Արեւելեան մամուլ 1905 թիւ 24 թորգոմ. — Ծաղիկ 1861—67:



# Ե Ղ Ի Ա Տ Ն Տ Ե Ս Ե Ա Ն

1834--1881



265.— ԵՂԻԱ ՏՆՏԵՍԵԱՆ

Եղիա Տնտեսան ծնած է 1834 Մարտ 29ին Պոլիսի Օրթագիւղ թաղին մէջ և զաւակն էր զպիր և թարգմանչաց վարժարանի անտես Մկրտչի ուրիշ մնացած է նոյն մականունը: Իր նախնական ուսումը կը ստանայ նոյն թաղին ազգային վարժարանին մէջ ուր այդ թուականին կը դաստիարակուի Գրիգոր վարժապետ (յետոյ Օրթագիւղի Տէր Պօղոսը) ուրիշ կ'ուսանի նաև Հայ երաժշտութեան սկզբունքները: 1848ին հազիւ 14 ամեայ պատանի մը, աւարտած նոյն ատենի դպրոցական շրջանը, կը մանայ Օրթագիւղի Արապեան սպարանը իբր ա-

չակերտ ուր 4 տարի անընդհատ կը նուիրէ ինքզինքը հմտանալու համար սպարական արուեստին նախնական գաղանիքներուն: Սակայն աւելի հրատարակելու զեղեցիկ կ'ըրևնայ իրեն ուսուցչութեան ասպարէզը որով 1852ին թողով սպարանը պաշտօն կ'ստանայ ազգային վարժարանին մէջ: 1861ին կը հրատարակէ իր առաջին երկը ծաղիխաղ կարողիկեաց բողոքեալ մեկնութեանց: Ազգային Սահմանադրութիւնը բովանդակ ազգին մէջ երկու հակահոսանքներ յառաջ բերած էր, խաւարեալներ ու յուսաւորեալներ:

Երիտասարդ ուժեր բնական բերումով պատկառնելով այս վերջին հասանքին կազմած էին անձնուէր ընկերութիւնը նորաստեղծ ընտանիքով իրենց ուսում ու կրթութիւնն ասորանելու ուսուցիչներ զրկել գաւառները, լուսաւորել գաւառի մութ անկիւնները և այդ միջոցաւ ամենի յաղթանակը ընդդէմ խաւարեալ հասանքին: Սոյն ընկերութիւնը բացի վերոգրեալ յայտնի նպատակէն ունէր նաև գաղանի հեռաւոր նպատակներ, այնպէս որ իրաւամբ այսօր կարելի ենք համարել զայն իբր Հայոց առաջին գաւառաբան ու յեղափոխական ընկերութիւնը: Այս ընկերութեան գործունէայ անդամներն էին Արքայան Խորասանձեան (Ատենապետ) Գէորգ Զարդարեան, Եղիա Տնտեսեան, Յ. Գօլանձեան եւն.:

Եղիա Տնտեսեան ընկերութեան ազնիւ նպատակներովը խանդավառուած յանձնառու կ'ըլլայ իբր ուսուցիչ մեկնելու ընկերութեան կողմէ գէպի Հաճըն 1862 Յուլիսին:

Իր նամակներէն մէկ քանինքը որոնք իր գաւառը Պրն. Լեւոն Տնտեսեան՝ ազնուութիւնը ունեցաւ մեր արամազրութեան ասակ գնելու, նոյնութեամբ կը հրատարակենք հաս: Այդ գրութիւնները կը նկարագրեն այդ կողմերու վիճակը նոյն թուականներուն:

1862 Յուլիս 9. Իզմիր

Առ Արգոյ Յովհաննէս ազա Գօլանձեան.

Իմ սիրելի ընտանիք, և ազնիւ եղբարք ու բարեկամք:

Այս առաջին անգամն է որ նամակով պիտի տեսնըվինք մեր բացակայութեան առթիւ. զի առէք, թէ որչափ ծանր է ասի իմ սրտիս. վասն զի բացակայութեան ատեն ինչպէս որ աւելի քաղցր է ինձ ձեր ազնիւ յիշատակը, հաւաստի եմ որ ձեզի ալ այնպէս է. ուստի այս նամակաւ պատիւ ունիմ ծանուցանելու ձեզ թէ կիրակի առաւօտ, Կէլի-Պօլու, Չանազգալէ և երեկոյն Միտիլի կղզին հանդիպելով, երկուշաբթի առաւօտ ժամը ինն ու կէսին Չմիււնիա հասանք, ամենայն ապահովութեամբ և հանգստութեամբ: Սիրելի եղբարք թէև մեզի համար ձեր աշխատութիւնը չափազանց եղած է, այլ վստահ ըլլալով ձեր ազնիւ սրտին, կը համարձակիմ կրկին ծանուցութիւն տալ ձեզ. վասն զի Մեք օրագրին բաժանորդագրին 50 դրուշ հատուցած ըլլալովս, մնացած 70 դրուշն ալ յարմար առթիւ մը հատուցանել բարեհաճիք ու մնացած թիւերն ալ դուք ընդունիք. ասոր թիւ-

ւերէն ձեր քովը եղածները (կարծեմ մոնք չենք ստած զանոնք) կարգով քննեցէք և թէ որ պակաս կայ, ուղելով այնպէս հասուցէք ստակը, և այս 70 դրուշն ալ մեր հաշուին անցուցէք:

Առ այժմ աւելի գրելու ժամանակ չունենալով կը յուսամ որ կը ներեն իմ սիրելի եղբարքներս, ուստի մասնաւորապէս բարեկեղով իմ սիրելի ընտանիքս և համայն հաւատարիմ բարեկամներս ու ծանօթներս, և ձեր Ամենայն բարօրութիւնս լսելու ակն ունենալով մնամ...

Ե. Մ. Տ.

1862 Յուլիս 14. Տարսն

Առ պատուարժան հայր իմ

Ի Պօլիս

յՕրթա-գիւղ դպրոց

Պատուարժան հայր

Իմ որպիսութիւնս ձեզի իմացնելով ձեր սիրտին հանգստութիւն տալը ինձի համար պէտք է և ձեր սրտին հանգստութիւնն ալ ինձ ուրախութիւն: Ուստի այս թղթովս կ'իմացընեմ ձեզ սիրելի հայր իմ որ կիրակի առտու Չանազ Գալէսի Կէլի Պօլու և իրիկուան Միտիլի հանդիպելով մեր շոգենաւ, երկուշաբթի առտու Իզմիր հասանք, իրիկունն ալ հանկէ ձամբայ ելլելով հինգշաբթի օրը ժամը հինգին Մէրսին հասանք ու ցամաք ելանք: Ա' ծովի ձամբան լմնացաւ: Եւ իրիկունը ժամը սասնին ձամբայ ելլելով Տարսն հասանք ուր տեղ մէկ երկու օր պիտի կենանք, ուստի ձեր սիրտը թող հանգիստ ըլլայ. հալա սոււտուն մախտուս բարե կ'ընէ ու շատ աղէկ է. եղբորս ու քրոջս մախտուս բարե կ'ընեմ և կ'ուզեմ որ հանգիստ ըլլան իմ վրայօքս. Աստուած սայ քանի մը օրէն մեր ցամաքի ձամբորդութիւնն ալ լմնալով. դարձեալ ձեզի նամակ կարենանք գրել, որուն յուսալով ձեր աղօթիցը օգնութեամբ.

Մնամ

Ե. Մ. Տ.

1862 Յուլիս 14, Տարսն

Առ յարգամեծար Գէորգ ազա Զարդարեան

Ի Պօլիս Վալիտէ խան

Մեծապատիւ տեարք.

Պատիւ ունիմ այս առաջին անգամ ներկայացընել իմ գրութիւնս առ ձեր արժանայարգութեան, և ծանուցանել մեր միջև Տարսն

յաջողութեամբ հասնիր. ուր տէր Գրիգոր վարդապետին ծանօթ եղող մէկուն սուշը իջեկանեցանք: Այս երկրին զրիցը, արհեստներուն և ընկերական վիճակին վրայ թէև տեղեկութիւններ կրնայ գրուել այլ կարծեմ ներելի է ինձ աւելորդ համարել ասի, զլիւսաւորաբար այն պատճառաւ որ այս տեղերուն վրայ շատ տեղեկութիւններ և դիտողութիւններ արգէն եղած են բազմաթիւ աշխարհագէտ անձանց կողմանէ, և որք ձեզի քաջ ծանօթ են, հետևաբար իմ մէկ երկու աւուր մէջ սասցած տեղեկութիւնքս մեծ արժէք չեն կրնար ունենալ: Այսու ամենայնիւ իմ ուշադրութիւնս հասկրող մէկ քանի կէտեր կան որոնց մասին եթէ այս մէկ քանի աւուր մէջ կարող ըլլամ տեղեկութիւն ստանալ չեմ դանդաղիր ձեր մեծութեանը ծանուցանել:

տասնն այլ որոշակի զինքը տեսնող չկայ: Տեղացի ազգայնոց սիրաբ բաւական զգայուն է՝ ազգային խնդրոց վերաբերութեամբ:

Առ այժմ այսչափով կը վերջացընեմ սոյն գիրս և ձեր մեծապատուութեանը կրկնելով, անկեղծ յարգանայս հաւատարիքը,

Մնամ...

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Յ. Գ.

Տեղւոյս եկեղեցւոյ վրաստակէն ելած քանի մը արձանագրութեանց օրինակները. առաջինը տապանագիր մ'է, որուն վրայ բոլորակ քանդակներ ալ կան:

Adagio 6-Մ ՏՆՏԵՍԵԱՆ

Գր. զե. կար ալ շիկ եմ եւ զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ.

Գր. զե. կար ալ շիկ եմ եւ զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ.

Գր. զե. կար ալ շիկ եմ եւ զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ.

Գր. զե. կար ալ շիկ եմ եւ զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ. զա շիկ Սկ եալ աս զամբիւ.

266.— ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԶԻԿ ԵՐԳԻ ԵՂԱՆՍԿԸ ՏՆՏԵՍԵԱՆԵՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԱՅ (Երոյպակսն Երոյպոյ)

Առ այժմ եթէ նշանակելու բան մը կայ, սա է որ հոս տեղի եկեղեցին հինք քակեր և նոր կը շինեն կանոնաւոր ձեով, քարակիր, որուն մէկ մասը դեռ հազիւ լմնացած է. ժամերգութիւնը մատուռի մը մէջ կ'ըլլայ. դպրոցը եկեղեցւոյն քովը, մուշ և փոքր որ աւելի բանտի կը նմանի. չորս պատուհան ունի բարձրէն և յիսուն տղայ հազիւ կ'առնէ, թէև տեղացիք զիւղերը ցրված ըլլալուն համար աշակերտ չկար, դասատուն ալ անոնց հետ գացած ըլլալով կը լսենք թէ հոն տեղ կ'ուսուցանէ:

Քսան օրի չափ յառաջ պարտնայք Խաչիկ Անուշեան և Աղէքսանդր Մէրեմզուղեան նոյնպէս և քանի մը օր առաջ Նազարէթեան մականուամբ հունգարացի Հայ մը հասեղ եկեր և դէպի Սիւ ուղեւորրեր են: Իշխան Ազա մականուամբ (Լեւոն իշխան) մէկուն ալ քանի մը ամիս առաջ այս կողմերս եկած ըլլալը կը հաս-

Որ վասն անշափ սիրոյ քոյին,  
Բանդ ի կուսէն տուր մարմին,  
Ազաչանօք Աստուածածնին,  
Թող ըզյանցանաւն զալիծին,  
Որ և հանգեաւ ի մեծ թուին,  
Չկ հընդին,  
Յորժամ գայցես յաշխարհ կրկին,  
Յարս ըզս փառօք քոյին,  
Չկ.

Երկրորդ արձանագրութիւն մ'է,  
Ի ԹՈՒՆ: ՀԱՌՅ (որոյ իմաստն է) Ի թուին հա-  
ՈՂԷ: ՆՈՐՈԳԵՅ յոց ո ի ե, նո-  
ԱՒ ՊԱՐԻՍՊ ՏԱՐՍ րողեցաւ պա-  
ՈՒՆ ՉԵՌՍԻ ԹԳ: րիսպ Տարսնի  
ՀԱՅՈՅ ՀԵՐՄՈՅ ձեռամբ թագա-  
ւորին հայոց Հեթմոյ:

1862 Յուլի . 14 Տարան

Առ Յովհաննէս Աղա Գօղանձեան  
ի Պոլիս

Սիրելի բարեկամք

Ձեր նեղագրութիւնը լեցրնելու համար թէև գրելու շատ նիւթեր կան որ առայժմ ճամբորդութեան մէջ ըստ արժանւոյն չպիտի կրկնեամ հազարեի, այլ հայրենեաց սուրբ աստուծոյ ներուզ վրայ առաջին անգամ օտք կոխած աստուծոյն գիրք շուշադնելու, միանգամ ըստ լրորվին ցամաք չմնալու համար գիտողութիւն ընել/կրցած քանի մը կէտերու վրայ ալ վեր ի վերոյ կը խօսիմ, ճամբորդութեան ընթացից կարգովը:

Հինգշաբթի օր (Յուլիս 12) Մէրսինի նաւահանգիստը ելանք և հոն նոր խան բաւած պանդոկին մէջ իջուանեցանք, ուրիշ ժամը ասանին ճամբայ ելանք ի Տարան ընտանկի ձիերու հեծնելով ուր հասանք գիշերը ժամը չորսին (թէև չորս ժամու ճամբայ է) ուր Հայու մը ասոն իջուանեցանք, հոս քանի մը օր մնալէ յետոյ Ասանայ երթալու միտք ունինք:

Մէրսինի համար պէտք է գիտնալ որ փոքր նաւամատոց մ'է ծովեզերքի երկայնութեան վրայ շինուած, որուն երկիրը բոլոր դաշտավայր է. ասունը ասիական սխտր կերպով շինուած են, վրանին հողով ծածկուած ու ապակի չունին, բնակիչները Յոյն և Արաբացի (Ֆէլլա) երկու հարիւր ասն չափ, Հայերը քանի մը գաղթականներ են միայն, չունան թէև փոքր և ամեն այլ ամէն պէտք եղած բաները կը գտնվին նաև երազական ճաշակի յարմար, վաճառատուններ, յանձնարարութեան անեականներ, խաներ, բաղնիք մը, ասուներուն ալ մէկ մասը սրբատաշ քարաշէն է: Երազական տէրութեանց հիւպատոսարաններ և Ռուսիոյ ու Գաղղիոյ շոգնաւուց գրասենեակները: Ինչպէս Օսմանեան նամակատան և ստիկանութեան կայարան մը: Ծովեզերքի մօտ հոր փորված է երկու մէթը խորութեամբ ջուրն ալ կրնայ խմիլ: Երկրացոյց մեծ մասը երկրազորք և պարտիզան, որք ամէն տեսակ ընտանի բերք կը հասցընեն նաև լեւոն եւն:

Աստի մինչև Տարան շարունակ դաշտ է շուրջանակի աչք առածի չափ բացի մի քանի բլուրներէ, միայն հեռուէն բարձր լեռներ կ'երևան որք Տորոսի գոտիներն են գուցէ՝ Մէրսինէն ի Տարան ճամբան դէպ ի հիւսիս: Տար-

անի մօտ հին աւերակէ մնացած կամարաշէն մեծ դուռ մը կայ որուն ներքեւէն կ'անցնին ճամբորդք, (ասի գոցէ հին Տարանի մէկ դուռը ըլլայ, հիմա Մէրսին Գարուսու կ'ըսեն): Քաղաքը գիշեր ատեն մանկուս համար շատ արտը երեւոց գուցէ, ուր ոչ ձայն, ո'չ լոյս և ոչ այլ ինչ այլ հողաշէն կամ քարաշէն անակներու կոյտ մը: Մեր նստած ասունը ինչպէս և շատեր երկու գաս անակներէ կը բազկանան միեւնոյն պարտէզին մէջ, որուն մէջէն անոյշ ջրի առուակ մը կ'անցնի, ասոր վրայ նստարան շինուած է, վրան ալ որթատունկով գոցուած որ շատ գուարճալի է, պարտէզին մէջ ալ քանի մը նարնջի ծառեր կան: Ամառ ատեն տեղւոյս բնակիչները չըջակայ գիւղերը ցրուած ըլլալով շատ բազմութիւն չգտնուիր, որով երկիրը բոլորովին ամայի բան մը կ'երևայ, գիշերը ասնիաներու և պարտիզաց մէջ եղած ննջարաններու (թահարոց) մէջ կը ննջին, որոց վրայ որթատունկով ծածկուած կ'ըլլայ, ինչու որ ասունը քարաշէն են և օգ չեն սառնիր, արևուն ասքութիւնն ալ կ'այրէ մինչև երեկոյ, ուստի ասուներու մէջ ամառ ատեն քնանալ անկարելի կ'ըլլայ: Մինչև նամակը գրած ատենս երկու հաս կանոնաւոր ասուն տեսայ, կեցցեն Եւրոպացիք որ գէթ Մէրսինի մէջ կանոնաւոր չէնքերու ճաշակ սարածել սկսած են, որ հեազնեակ պիտի ընդհանրանայ: Եուկային մէջ հին գմբէթաշէն խանութներ ալ կան և Մարք չարչրսիէն քիչ փոքր շուկայ մը:

Տեղացի ազգայինք մարդասէր և ազգային խնդրոց վրայ քիչ շատ զգայուն են, (և երեք հարիւր ասունի չափ կան): Այսչափ բաւական համարելով վերջացրնելէ յառաջ քանի մը խօսք ալ իմ վրայօք խօսիմ:

Ազնիւ եղբարք, ձեզմէ անջատուելէս ի վեր սրտիս անձկութիւնը չեմ կրնար բացատրել, դուք՝ որ գիտէք զգայուն բառին ճիշտ իմաստը, կրնաք վերահասու ըլլալ բառիս, թէև մարդասէր, ազգասէր, բայց ընկերական կեանքերնին խորթ ըլլալով չունին այն զուարթ ներդաշնակութիւնը որ կը տիրէ մեծ բարեկամութեանց մէջ, այս տեսակ ընկերութիւնը սկիւմայ կամօք պիտի նմանի վաճառականի մը բարեկամութեան որ շահախնդրութեան ազգատէր շատ բարեկամներ ունի, այլ ոչ համակարծիք: Մենք ալ առ այժմ այս վիճակին մէջ կը գլտնվինք, ազգային շահ տոբիտալ, ասոր երկիրք, որ ես սխալած ըլլամ և գտնեմ այնպիսի

անձինք որոց յարաբերութիւնը ինձ աշխոյժ և եռանդ և հայրենեաց ալ օգուտ մը մատակարարէր:

Ուրեմն հարկ չէ ըսել որ ձեր նամակները առանձնութեանս մէջ մեծ միտքարութիւն պիտի ըլլան ինձ որոց սպասելով և ձեր սիրելութեան կրկնելով եղբարական յարգանաց հաւաստիքս:

Մնամ...  
Յ . Գ .  
Ե . Մ . Տ .

Այս նամակս ամեն բարեկամաց ուղղեալ լինելով հաճեցէք ամենուն ալ ցուցընել, յորոց զոմանս արդէն գիտէք և զոմանս յանուանէ յիշտակեմ,— Խորասանձեան, Մ . Փափագեան Ա . Համամձեան, եւն .: Խնայողական ընկերութեան անդամներուն ալ մամաւոր բարեւ մատուցէք մեր կողմէն: Յուլիս 9 Իզմիրէն նամակ մը ուղղեցի . ներփակեալ նամակն ալ մեր ընտանեացը հասցնել թարեհաճեցէք, այս նամակն ալ մեր հեա կողմ Տիգրանին գրել տուի, ու ստորագրեցի, ժամանակ չըլլալուն համար:

1862 Յուլիս 19  
յԱսանայ

Առ Յարգամեծար Գէորգ աղա Ջարգարեան  
Յարգապատիւ Տեարք,

Այսօր երկու օր է որ Ասանայ կը գտնուինք և եթէ յաջողի Յուլիս 25երորդ օր ճամբայ պիտի ելլենք ի Հաճըն, այս ճամբան թէև երկրազոյի ըստ տեղւոյն բայց մեր հեա տեղացուցմէ քանի մը անձինք ըլլալով կասկած մը չունինք, միայն Տարանի մէջ լուր մը ասինք որ բաւական մաստանջութիւն պատճառեց մեզ, որպէս թէ Գրիգոր Վարդապետը Պոլսոյ մէջ թագաւորին աղերսագիր սուած ըլլայ Գօղանի պէջին հարստահարութեանցը համար, և թէ պէջը զատի լսելով շատ նեղացած ըլլայ:

Այս համարը ա'յնչափ ծանրակշիռ է որչափ որ ծանրակշիռ է պէջին համար այս կողմերէն Վարդապետի մը Պոլիս երթալը և հոնտեղէն վարժապետի անունով մէկուն իւր հեա ընելը, թէև ասի ոչինչ բան մը կ'երևայ այլ երկրին վիճակը մօտէն գիտող և տեղացուց հեա ուղղակի տեսութիւն ընող մէկը ազէկ կ'իմանայ այս համարունը կշիւր, և այն ալ այնպիսի երկրի մը մէջ որ ամեն բանարարութիւն անպատիժ կը մնայ կամ այնպէս կը կարծուի: Այս Գօղանի պէջին խորամանկ բարբարոսութեանցը մասին շատ բան իմացայ զոր յառաջ չէի կրնար

գիտնալ, լսածուս նայելով Հայաստանի և ոչ մէկ կողմը այս տեսակ բանարարութիւն կ'ըլլայ ինչպէս հոս, ուստի այս համարունը վրայ պէտք եղաւ խորհիլ, և թէ որ կարելի է հոս տեղէն ներկայացման թուղթ մը ասնել ուղղեալ աս Գօղանի պէջն, այս մասին Ծանցագեան նաղարէթ աղայի հեա խօսիլ ազէկ թուեցաւ ինձ, կը յուսամ որ զգուշութեամբ հարք մը պիտի գտնենք: Գրիգոր Վարդապետի միտքը առ է որ եթէ չըլլայ, ինքը մնալով զմեզ Տէր Սարգիս քանապոյն հեա պիտի գրկէ, վասն զի իրեն զուարթ մնալը Գօղանի պէջին երկրազ պատճառելով մեզի ալ մնաս մը չկրնար հասցնել: Այս մասին ձեր մեծապատուութեան մէկ որոշումը յառաջիկայ բովանդով ասնել կը յուսամ:

Քաղքիս մէջ ալ վէճ կայ ազգային գործոց համար, առաջնորդը Յովհաննէս Եպիսկոպոս և իշխանները մէկ կողմ ու ժողովուրդը միւս կողմն են, հասարակաց իրաւանց հաստատութեանը համար Սոյ Ս . Կաթողիկոսէն ալ կոնգակ մը եկած է որով տեղւոյս քաղաքական մեծիւն համար ժողովուրդին ընտրած մէկ անձը (Պէգիրձեան հաճի Գէորգ աղայն) կը հաստատէ, միանգամայն ամէն կարգի եւնաճկեմեմ գաւառական ժողովի մը կողմութիւնը կը պատուիրէ, որք եկեղեցեաց շէնքին և կամարին և զպրոցաց հոգ պիտի տանին, կոնգակին մէջ Ազգային Սահմանադրութեան վրայ ալ գովեստաւ կը խօսուի, Այս վէճերուն վրայ Ծանցագեան նաղարէթ աղայն ալ բաւական ազգեցութիւն ունի, ինքը յառաջադէմ մասին հեա է, այլ միանգամայն ծանր շարժելու և խոհեմութեամբ գործելու կը յորդորէ զժողովուրդը, մեր հոտեղ ժամանած ատեն շատ սիրալիր ընդունելութիւն ըրին երկրացիք: Չօրդձեան հաճի Յովհաննէս աղայն որ իւր նահապետական հիւրասիրութեամբը իւր ասունը ընկալաւ զմեզ, մասնաւորապէս կը բարեւէ զօքքթօր Յ. Ծիշմանեանը: Այս մարդուն հիւրասիրութիւնը և ազգասիրութիւնը շատ գովելի է, և բոլոր քաղաքացուց կողմանէ հաշակուած, մենք ալ ինքզինքնիս երախտապարտ խոտտովանելով այս ձերունի հիւրընկալ անձին, կը վերջացնենք գրութիւնիս:

Մնալով...  
Յ . Գ .  
Ե . Մ . Տ .

Նախընթաց նամակին մէջ յիշված արձանագրութեանը համար լսինք թէ հին եկեղեցուցն ներքեւէն ելեր է, սակայն յետոյ ստուգեցինք

որ Նեմրուն (Համբրոն) բազմ տեղէն են (քաղքիս հիւսիսային կողմը 8-9 ժամ հեռու) : Տարանի մէջ քիլիսէ կամ կեալուր ճամբիս բազմ մղկիթը պարտեցանք, որ երբեմն Ս. Սոփիայ անունով հայոց եկեղեցին է. ասոր մէջ ընաւ փոփոխութիւն չէ եղած. պատերն ալ ձեւ փած չէ. ու աղտոտ, հարաւային կողմի պահարանին դուռը որուն երեսը դէպ ի արեւելքը, վրան երկու տող հայերէն գիր կար զոր օրինակեցի, միւս կողմին գիրը բոլորովին եղծուած լինելով անհնար էր ընթեռնուլը, ահա ասոր օրինակը :

ԱՅՍ ԴՈՒՌՆ ՏՆՆ. Է այս դուռն սուեն  
 ԱՐԴՍՐՈՑ, ԵՒ ԲՆԱԿԱ Է արդարոց, և  
 ՐԱՆ ԵՐԿՐԱԻՆՈՑ ՊԱՀ քնակարան երկրայ  
 ԵՍ. ԶՍԱ. ԷՇԵՄՔ ՀԱՅՈՑ նոց. պահեա զսա...  
 ԼԵՐ ՔԱԻԻԶ ՆԱԽՆԻ հայոց լեր քաւիչ...  
 ԳՈՐԾՈՑ գործոց :

(Մանօթութիւնք)

(Այս նամակիս հեա մասնաւոր յաւելումով մը յիշատակված է քաղքիս աղջայնոց զէճերուն շարունակութիւնը Պէզրիճեանի ժողովէն հանուելը ու բանա ասորիւով նոյն զիշերը Անգղիոյ հիւպատոսի միջնորդութեամբ աղաատուլը են. և նաև Ուլնիոյ Կէրիմէն զիւղին մէջ պատահած անցքը և Մարաշու կուսակալին Ուլնիոյ վրայ երթալու պատրաստութիւնը, զորս քաղքիս կուսակալին մասնաւոր սուրճանդակով մը հազորդուած էր Մարաշու կուսակալին կողմէն :)

Այս երկու նամակին պատասխանը առած ենք ի Պօլսոյ 1862 օգոստոս 7. ստորագրեալ Ծ. Մուշեղեան :

Հասցեն, ԵՂԻԱ. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ,  
 Ի Հաճըն  
 Առ Մեծարգոյ Կարապետ աղա Պալթանան  
 Ի Տարսոն  
 1862 Յուլիս 24  
 Ասանայ

Յարգամեծար աղա.

Թէև միայն քանի մը օր տեսութիւն կրցանք ընել, սակայն ձեր ազնիւ սիրան ու ազգասիրութիւնը աղէկ գիտնալով կը համարձակիմ այսօր առաջին գրոյս հեա աշխատութիւն մ'ալ առաջարկել ձեզ յանուն բարեկամութեան, որով կ'աղաչեմ որ գրութեանս մէջ ներփակեալ նամակը իւր տեղը հասցնենք ձեզ բարե-


կամաց մասնաւոր բարեւ մատուցանել բարեհաճիք : Մեղմէ կ'ուզէիք իմանալ մեր բարեկամներէն մէկ քանիին անունները որպէս զի հետերնին տեսնուիք. ահաւասիկ մէկ քանիները կը նշանակեմ. Մեղրո հանդէսի խմբագիր, Պ. Յ. Սվաճեան, միւսկալի խմբագիր, Պ. Կ. Փանտեան, չարսուն Բէրտահճըլար փողոցը Սահակ, Յարութիւն և Արաճամ աղայք Ղաղարտեան, ուզուն չարսըն Պազմաճիններուն մէջ Օրթագիւղցի Գօլանճեան կազմաճի Յովհաննէս աղայն են :

Ասանայի մէջ ձեր բաժնի օղլու հաճի Յարութիւն աղայն զմեզ իւր տունը ընդունեց, ուր կեցանք մինչև ցոյսօր, որն որ ձեզի ալ բարե կ'ընէ. ևս ալ իմ կողմանէս մասնաւորապէս բարեւելով զձեր ազնուութիւնը, մնամ...  
 Ե. Մ. Տ :

1864 Յուլիս 24  
 Ասանայ

Առ.....  
 Հաւատարիմ Բարեկամք.

Այսօր Յուլիս 24 Ասանայէն դէպ ի Սիս և անտի ՚ի Հաճըն պիտի մեկնինք : Երկրիս արդի հանգամանքը ծանրացած են Ուլնիոյ կուսոյն և գլխաւորապէս Գօլանի պէյին Գրիգոր վարդապետին հեա ունեցած թշնամանաց համար. վարդապետը սա այժմ ստիպուեցաւ հոս մնալ կամ դարձեալ Պալիս և մինչև անդամ Եւրոպայ երթալ, զի ասոր Հաճընէ դուրսը մնալը բնաւ ւայրենուն երկիւղ կը պատճառէ : Ասոնց խորամանկ բարբարոսութեանը մասին դէպք մը պատմեմ որ տեղւոյս Բողոքական Պատուելին պատմեց. այս պէյերէն մէկը երկու անձի մահու թշնամութիւն ունենալով և զանոնք մեռցնել ուզելով որոց վերջինը իւր ծառայութեանը մէջ գանուող տաճիկ մ'է եղեր, կը հրամայէ ասոր որ առթիւ մը զմիւսը սպաննէ. ինքն ալ հացկերոյթի մը հրաւիրելով զառաջինը, շատ պատուելէ յետոյ քանի մը ընծաներ ալ կուտայ : Քանի մը օր յետոյ իւր ծառան ալ ըստ իւր առած հրահանգին առթիւ մը կ'ըսպաննէ զանի. այս լուրը լսվելուն պէս պէյը իւր խորամանկութիւնը պատրուակելու համար մեծ ցաւ կը ցուցնէ և կը հրամայէ որ անմիջապէս մարդասպանը գանուի ու մահուան դատապարտուի, ասով որպէս թէ արգարութիւն ըրած երեւնալով իւր նպատակը յառաջ կը տանի որ էր



Ենթակալութեամբ կ'արձանագրենք թէ շարք Յովհաննէս Շիշմանեան 2 օրինակ Յիշատակարան նուիրած է մին Վանայ Երամեան վարժարանին և միւսը Վանայ Կառլոս Անապատի վանահայր Գեր. Ստեփան Եպս. Աղազարեանի:

Հապէշխանի, Սուտանի և Եզիպտոս մեր ընդհանուր գործակալն է Տիար Սուրէն Զազմազեան, Գահիրէ Գաֆէ Շիշա. — որու կարելի է դիմել բաժանորդագրութեան և վճարմանց համար:

Մեկ պրակի գինը 2 դրուս. գաւառներու համար 100 փարս  
Դիմել Զարդարեան Իրասուն, Կ. Պոլիս, Զաւնագերլար, 24 — 26:  
Կը ծախուի ամէն տեղ:

ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

				Նշ.
				9866
129.	Տիարք	Գրիգոր Եղիաեան (Gregoire d'Elie)	4	հատորի 480
130.	»	Թովմաս Թօփուզեան Ալէքսանտրիա	Ա. Բ.	» 54
131.	»	Սեդրաք Դաւիթեան Գահիրէ	4	» 108
132.	»	Պօղոս Երամեան	Ա.	» 30
133.	»	Յակոբ Աղմամեան	4	» 108
134.	»	Երուանդ պէյ Աղաթոն	4	» 108
135.		Գրադարան Հնթերցարան Երուսաղէմի	4	» 108
136.	Գեր.	Դաւիթ Մ. Վ. Տէտէեան	4	» 108
137.		Վարժարան Ժառանգաւորաց	4	» 108
138.	Գեր.	Յարութիւն Վ. Պարոնեան	4	» 108
139.	Տիարք	Տր. Վանան Բասքալ	4	» 108
140.	»	Փրօֆ. Յրէտէրիք Մուրատեան Եաֆա	4	» 108
141.	Վեր.	Հ. Գարրիէլ Վ. Գասպարեան Գահիրէ	4	» 108
142.	Տեարք	Անթիմոս Բիւլաղեան	4	» 108
143.	»	Ներսէս Բ. Շահինեան Մարաշ	Բ.	» 30
144.	»	Յովհաննէս Շիշմանեան	Բ.	» 30
145.	Գեր.	Մատթէոս Վ. Գայրզեան Գահիրէ	4	» 108
146.	Տիարք	Վահան Մալէզեան	4	» 108
147.	»	Յ. Բարբերդեան Զակազիկ	4	» 108
148.	»	Յ. Պ. Աբէլեան	4	» 108
149.	»	Ս. Դէրզիեան	4	» 108
150.	»	Ա. Սանտալեան	4	» 108
151.	»	Ա. Մալլաքճեան Ասիութ	4	» 108
152.	»	Գ. Սմարեան	4	» 108
153.	»	Հ. Տէր Յովհաննէսեան	4	» 108
154.	»	Միհրան Թոզաթլլեան Զակազիկ	4	» 108
155.	»	Դաղէփ Շահպաղեան Գարթալ	Բ.	» 30
				12,786

ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0510492

ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0364248

III  
1648

III  
1649